ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՔՈՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Վարկային պատմության էությունը.

Վարկային պատմությունը հաճախորդի գործող և փակված ֆինանսական պարտավորությունների կատարման որակի վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքագրվում է Վարկային բյուրոյում վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրվող տեղեկատվության հիման վրա: Հավաքագրվող տեղեկատվությունը համակարգվում է Վարկային բյուրոյի կողմից և ըստ անհրաժեշտության (Նոր վարկի դիմում, գործող վարկի մոնիտորինգ և այլն) տրամադրվում է համապատասխան իրավասություն ունեցող, հարցում կատարող ֆինանսական կազմակերպությանը: Հաճախորդի վարկային պատմությունը էական նշանակություն ունի Բանկի համար՝ տվյալ հաճախորդի վարկունակության գնահատման և վարկի տրամադրման կամ մերժման որոշում կայացնելու նպատակով:

Սխալ կամ թերի վարկային պատմությունը փոխելու համար հաճախորդը կարող է դիմել ԱՔՌԱ վարկային բյուրո՝ ներկայացնելով գրավոր դիմում առձեռն կամ էլեկտրոնային եղանակով, պարզել, թե ինչ տվյալներ են պահվում այնտեղ իր մասին, և որն է սխալ կամ թերի տեղեկատվության աղբյուրը:

ԱՔՌԱ վարկային բյուրո դիմում ներկայացնելու համար անցեք հետևյալ հղումով. https://acra.am/?lang=hy

Վարկային պատմության կարևորության և նշանակության վերաբերյալ կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով. https://www.abcfinance.am/lifesituations/credit-history.html

Վարկային ՍՔՈՐ գնահատականի էությունը՝

Բանկը, որոշ վարկատեսակներ տրամադրելիս, կիրառում է հաճախորդի վարկունակության գնահատման սքորինգային համակարգ: Հայտատուի Սքոր գնահատականը հիմնականում ձևավորվում է վարկային պատմության տարբեր չափորոշիչներից, ինչի հիման վրա հայտատուի վարկունակությունը գնահատվում է բալային համակարգի միջոցով: Սքոր գնահատականը Բանկին հնարավորություն է տալիս հաշվի առնելով հայտատուի նախկին և ներկա ֆինանսական պարտավորությունների մարման պարտաճանաչությունը, նոր պարտավորություններ ստանձնելու հաճախականությունը և այլ չափորոշիչներ, մոդելավորել և կանխատեսել հայտատուի հնարավոր վարքագիծը նոր տրամադրվելիք վարկի գործողության ժամանակահատվածում:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲ Ընկերությունը կիրառում է Բանկի կողմից մշակված և ներդրված գնահատման սքորինգային համակարգը:

Սքոր գնահատականի վրա ազդող գործոններն են. վարկային ծանրաբեռնվածություն, գրանցված եկամուտների առկայություն, նախկինում ուշացումներով վճարված պարտավորություններ և այլն: Վարկային պատմության յուրաքանչյուր հարցումը կարող է բացասական ազդեցություն ունենալ տվյալ հայտատուի ՍՔՈՐ գնահատականի վրա և նվազեցնել այն:

Հաճախորդի վարկային պատմությունը և սքորը կարող են բարելավվել հետևյալ քայլերն իրականացնելու արդյունքում.

- ամբողջովին մարել առկա ժամկետանց վարկային պարտավորությունները և բացառել ընթացիկ վարկերի գծով պարտավորությունների կատարման նույնիսկ մեկօրյա ուշացումները,
- խուսափել ապագայում անվստահելի անձանց վարկերի համար երաշխավոր դառնալուց,
- ունենալ գրանցված եկամուտներ:

Վարկային պատմության կարևորության և նշանակության վերաբերյալ կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով. https://www.abcfinance.am/lifesituations/credit-history.html